	<p>Ընթացակարգ Բրոքերային ծառայությունների մատուցման</p>	<p>Կոդ: ՀՎԾ/ԸՆԹ25-02-05 Խմբագրություն: 04 Դաս: ՀՊ Ամսաթիվ: «12» մարտի 2021թ.</p>
---	---	--

Հավելված 5


ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԻ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՑԱՆԿԸ

1. Բանկի կողմից ներդրումային ծառայություններ մատուցելիս առաջացող հնարավոր շահերի բախումների տեսակները հետևյալն են՝
 - 1) Հաճախորդի հետ արժեթղթերի առուվաճառքի գործարքների կնքում շուկայականից տարբերվող գներով՝ ի օգուտ Բանկի կամ դրա աշխատակցի և ի վնաս Հաճախորդի,
 - 2) Հաճախորդին պատկանող արժեթղթերի վաճառք շուկայականից ավելի ցածր գնով Բանկին, Բանկի աշխատակիցներին կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց,
 - 3) Հաճախորդին պատկանող միջոցների ներդրում բանկի, բանկի աշխատակիցների և/կամ բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց պատկանող արժեթղթերում,
 - 4) Հաճախորդի միջոցների հաշվին ավելորդ կամ վերջինիս շահերին չհամապատասխանող գործարքների իրականացում, որը նպատակ է հետապնդում մեծ ծավալներով միջնորդավճարների գանձում հաճախորդից,
 - 5) Հաճախորդի կողմից տրամադրված ծառայողական տեղեկությունների օգտագործումը ի օգուտ Բանկի, Բանկի աշխատակցի կամ այլ փոխկապակցվախ անձի, ի վնաս հաճախորդի.
 - 6) Արժեթղթերով այնպիսի գործարքների իրականացումը, որոնք կարող են լինել ի շահ մեկ հաճախորդի և ի վնաս մեկ այլ հաճախորդի,
2. Նշված հնարավոր շահերի բախումների ցանկը սպառիչ և ամբողջական չէ: Ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել շահերի բախումների նաև այլ դեպքերով:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼԻՍ

3. Շահերի հնարավոր բախումները կանխարգելելու նպատակով Բանկը կիրառում է հետևյալ միջոցառումները՝

	<p style="text-align: center;">Ընթացակարգ Բրոքերային ծառայությունների մատուցման</p>	<p>Կոդ: ՀՎԾ/ԸՆԹ25-02-05 Խմբագրություն: 04 Դաս: ՀՊ Ամսաթիվ: «12» մարտի 2021թ.</p>
---	---	--

- 1) Բանկի աշխատակիցը հաճախորդների գործարքները կնքում է հաճախորդի կողմից ներկայացված համապատասխան պատվերի հիման վրա՝ պատշաճ ձևակերպված,
- 2) Խուսափել այնպիսի գործարքների կնքումից, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ Հաճախորդի շահերի վրա:
4. Արժեթղթերի շուկայում գործառնություններ իրականացնելիս Բանկը գործում է ելնելով բացառապես Հաճախորդի շահերի պաշտպանությունից: Այդ նպատակով բանկի համապատասխան աշխատակիցները պարտավոր են՝
 - 1) Պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, Բանկի ներքին կանոնները, ինչպես նաև աշխատանքային և մասնագիտական էթիկայի կանոնները,
 - 2) Չիրականացնել հաճախորդի շահերին հակասող գործարքներ, որոնք արդյունքում կհանգեցնեն վերջինից գանձվող միջնորդավճարների և այլ վճարների ծավալների մեծացմանը,
 - 3) Գործել ազնիվ և բարեխիղճ:
5. Իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին գործարքներ իրականացնելիս Բանկը և համապատասխան աշխատակիցը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի դրանք կատարվեն անկողմնակալ, անհապաղ և ճշգրիտ: Այդ միջոցառումները պետք է հնարավորություն տան Հաճախորդի այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարել ըստ ներդրումային ծառայության մատուցող անձի կողմից դրանց ստացման հաջորդականության:
6. Իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին գործարքներ իրականացնելիս Բանկը և համապատասխան աշխատակիցը պետք է՝
 - 1) Համոզվի, որ գործարք կատարելու համար պատվերները պատշաճ կերպով գրանցվել և ներկայացվել են կատարման,
 - 2) Այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարի ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ, եթե պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում,
 - 3) Համապատասխան Հաճախորդի պատվերի առկայության դեպքում Բանկը խուսափում է պատվերի առարկա գործարքին նույնական գործարք իրականացնելուց նախքան Հաճախորդի պատվերի կատարումը,
 - 4) Հաճախորդին անհապաղ տեղիակ պահի այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում հաճախորդի պատվերի ճշգրիտ կատարումը: